I

ՏԻԳՐԱՆ II ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Տիգրան II Մեծին (մ. թ. ա. 95–55) նվիրված պատմագիտական հսկայածավալ գրականության մեջ մեծ տեղ է տրվել նրա ռազմաքաղաքական գործունեությանը[1]: Ընդհանրացնելով հայտնված տեսակետները և գնահատականները՝ պատկերն ամբողջանում է, երբ Տիգրան Մեծի գործունեությանը մոտենում ենք քաղաքակրթական չափանիշների տեսանկյունից:

Մեծ Հայքի թագավորության և աշխարհակալության ռազմական, տնտեսական և հոգևոր բնագավառներում Տիգրան Մեծի պետական գործունեությանն է վերաբերում Մովսես Խորենացու հետևյալ խոսքը. «...յաղագս մեծին Տիգրանայ... հուժկու, անուանի եւ յաղթող ընդ այլ աշխարհակալս՝ ճառեսցուք որ ինչ կարեւորագոյնն է ոճոյ բանիս... Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանց այնոցիկ և ամենեցուն քաջ»[2]:

Տիգրան II Մեծի ներքին և արտաքին քաղաքականությունն ուղղված էր Մեծ Հայքի թագավորության անվտանգության և անկախության ապահովմանը, ինչը բխում էր ռազմաքաղաքական որոշակի սկզբունքների համակարգից: Տիգրան Մեծի արտաքին քաղաքականության առանցքը միջազգային ռազմաքաղաքական և տնտեսական ասպարեզներում Հայոց պետության հզոր դիրքի ու բարձր հեղինակության ամրապնդումն էր:

Աշխարհաքաղաքական ասպարեզում Հայաստանի կարևոր նշանակությունը, ինչպես նշել է Հ. Մանանդյանը, պայմանավորված էր ոչ միայն այն հանգամանքով, որ այստեղ գտնվում էր «...համաշխարհային առևտրական ճանապարհների հյուսիսային մեծ գիծը, այլ, գլխավորապես, նրա ռազմական ու ստրատեգիական մեծ կարևորությամբ: Շնորհիվ աշխարհագրական իր առանձնահատկությունների՝ Հայկական լեռնաշխարհը, ինչպես հայտնի է, հսկայական բնական մի միջնաբերդ էր և ուներ առաջնակարգ նշանակություն ինչպես պաշտպանողական, նույնպես և հարձակողական պատերազմի հա-

---

[1] *Այս թեմայով զեկուցումը կարդացվել է «Տիգրան Մեծ. գահակալության 2100-ամյակ» միջազգային գիտաժողովում, Երևան-Օշական, 2005:*

[2] *Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի), Երևան, 1991, էջ 70-71: Պատմագրության մեջ նշվել է, որ Մովսես Խորենացու շարադրանքում արտացոլվել են Տիգրան Երվանդյանի (մ. թ. ա. VI դ.) և Տիգրան Մեծի կերպարները (Տե՛ս* М о в с е с Х о р е н а ц и. История Армении, перев. с древнеарм., введение и примеч. Гагика Саркисяна, Ереван, 1990, с. 240, прим. 295):

մար»[3]: Քննադատելով որոշ սկզբնաղբյուրների և դրանց հաղորդումներին անքննադատորեն մոտեցող այլազգի պատմաբանների միտումնավոր տեսակետները՝ Հ. Մանանդյանը գրել է. «Հայտնի է արդեն, թե ինչպիսի մեծ վարպետությամբ Հռոմը կարողացել էր ստեղծել իրեն սպասարկող ներբողական պատմագրություն, որը լռության էր մատնում հակառակ պատմական ճշմարտության Հռոմի համար աննպաստ փաստերը»[4]: Անդրադառնալով Մոմզենի, Ռեյնաքի և Ֆեռեռոյի ուսումնասիրություններին՝ Հ. Մանանդյանը նշել է, որ նրանք ուշադրություն չեն դարձրել, որ Պլուտարքոսի և հռոմեական մյուս հեղինակների որոշ միտումնավորություն պարունակող տեղեկությունները հերքվում են հաճախ չեզոք աղբյուրներում պահպանված վկայություններով: Նա այդ բացատրել է նրանց հակակրանքով դեպի Արևելքը և ասիացիները, ինչպես նաև՝ Հռոմի զորավարներին հերոսացնելու ու իդեալականացնելու ձգտումով[5]:

Տիգրան Մեծը հռոմեական և պարթևական պետությունների ծավալապաշտական քաղաքականության դեմ կիրառեց իր ռազմական ու դիվանագիտական ողջ զինանոցը: Տիգրան Մեծը, Ծոփքի վերամիավորումով, ամբողջացրեց Մեծ Հայքի թագավորության տարածքը[6]: Կապադովկիայի խնդրում դաշնակցային հարաբերություններ հաստատելով Միհրդատ Պոնտացու հետ՝ նա հանգուցալուծեց հայ–պոնտա–կապադովկյան դիմակայությունը Հռոմի նվաճողական գործողությունների դեմ[7], այնուհետև, Վիրքն ու Աղվանքը ընդգրկելով իր տերության ազդեցության ոլորտում[8], ապահովեց Մեծ Հայքի թագավորության թիկունքը հյուսիսից: Պարտության մատնելով և իր իշխանությանը ենթարկելով Պարթևական թագավորությունը[9] (որի գահին ապօրինաբար տիրացել

---

[3] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 214:*

[4] *Նույն տեղում, էջ 8:*

[5] *Նույն տեղում, էջ 9:*

[6] *Ռ. Մանասերյանը գրել է. «Տիգրանն իրագործեց հայկական հողերի մեծագույն մասի պետական միավորումը: Նրա իշխանությունն այժմ ընդգրկում էր Հայկական բարձրավանդակի գրեթե ամբողջ տարածքը»* (*Ռ. Լ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 31*): *Այնինչ, ըստ Ստրաբոնի, Տիգրանը՝ հաղթելով Ծոփքի հայկական վերջին թագավոր Արտանեսին, դարձավ ամբողջ երկրի* (*այսինքն՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհի* – Է. Դ.) *տերը.* “…καὶ πάντων κατέστη κύριος ἐκεῖνος…” (The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Cambr., Mass., London, in eight volumes, vol. V, 1954, XI. 14. 15)*:*

[7] *Տե՛ս* M. Juniani Justini Epitoma Historiarum Philippicarum Pompeii Trogi. Ex recen. Fr. Ruehl, Lipsiae, 1915, XXXVIII, 3, 1-5; Plutarch’s Lives, with an English translation by B. Perrin, London, in eleven volumes, vol. 4, 1950, Sulla, V; *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 31-33:*

[8] *Այդ է վկայում Պլուտարքոսի հաղորդումը՝ Տիգրանի զորքում, ի թիվս այլոց, իբերների և աղվանների ներկայության մասին* (Plutarch's. Lives. Vol. 2, 1959, Lucullus, XXVI; *հմմտ. Գ. Խ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայկական տերությունը, նրա տեղն ու դերը Առաջավոր Ասիայում.– տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 570, Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 53, Մ. Օ հ ա ն յ ա ն. Հայաստանը հին աշխարհի երկրների համակարգում.– ՊԲՀ, 2001, № 2, էջ 227*):

[9] *Տիգրան Մեծը Հայոց գահին վերադարձրեց «արքայից արքա» տիտղոսը: Հայաստանում «արքա արքաների» տիտղոսը վկայվել է դեռևս Արարատյան՝ Վանի թագավորության վաղ շրջանի սեպագիր արձանագրություններում (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 39–40):*

էր Գոտարզ I-ը[10]) և այլոց, Տիգրան Մեծն ընդունեց «արքայից արքա» տիտղոսը[11] ու հաջորդ տարիներին Հայոց աշխարհակալության սահմանների մեջ ընդգրկեց Կիլիկիան, Կոմմագենեն, Փյունիկիան, Նաբաթեան, Պաղեստինը, Ասորիքը[12] ՝ մինչև Եգիպտոս ընկած տարածքները[13]: Ինչպես Պլուտարքոսն է տեղեկացրել, «Հայաստանում թագավորում է Տիգրանը, արքայից արքան, որն իր

---

[10] *Դեռևս Միհրդատ* II-*ի օրոք* (*մ. թ. ա.* 123-88) *սատրապների սատրապ Գոտարզը մ. թ. ա. 91 թ. Բաբելոնում իրեն տիրակալ (թագավոր) էր հռչակել: Միհրդատ* II-*ը շարունակում էր իր իշխանությունը պահպանել Իրանում և Հյուսիսային Միջագետքում: Ենթադրվում է, որ Գոտարզը* (*մ. թ. ա. 91–88 թթ.*) *Արշակունի չէր, նրա իշխանությունը ապօրինի էր, ուստի չէր հավակնել կրել «արքայից արքա» տիտղոսը* (N. C. D e b e v o i s e. A Political History of Parthia. New York, 1968, p. 48-51):

[11] "...βασιλεὺ[Ἀρμενία[Τιγράνη[ὁ Τιγράνου[ἔθνη πολλὰ τῶν περιοίκων ἰδίοι[δυνάσται[χρώμενα ἐλών, βασιλεὺ[ἀπὸ τοῦδε βασιλέων ἡγεῖτο εἶναι..." (*տե՛ս* Appian's Roman History, with an English transl. by H. White, in four volumes, vol. II, Book XI, The Syrian Wars, VIII, 48, London, 1955, p. 196-197): *Տիգրան Մեծը պարթևներից հետ վերցրեց «Յոթանասուն հովիտները» և իր տերությանը միացրեց Նինվեի ու Արբելայի շրջանները: Տիգրանը պարթևական ենթակայությունից ազատագրեց Հայկական լեռնաշխարհից հարավ-արևմուտք գտնվող Հայոց Միջագետքը՝ Արվաստանով (Միգդոնիա՝ Մծբին կենտրոնով) և Ուռհա-Եդեսիայով: Հայոց Միջագետքը ռազմավարական կարևոր դիրք ուներ Հյուսիսային Միջագետքում, որի զգալի մասը, ըստ Ստրաբոնի, ենթակա էր հայերին: Ադիաբենի մասին խոսելիս հույն աշխարհագետը միևնույն ժամանակ գրել է, որ աշխարհի այս մասում մեծագույն ազգերն էին մարերը, հայերը և բաբելացիք, ընդ որում, պարթևները տիրել էին մարերին և բաբելացիներին, իսկ հայերը երբեք նրանց ենթակա չէին եղել* ("...οἱ γὰρ Μῆδοι καὶ οἱ Ἀρμένιοι, τρίτοι δὲ Βαβυλώνιοι τὰ μέγιστα τῶν ἐθνῶν...". *տե՛ս* S t r a b o, XVI, 1, 19 *և* 26)*: Տիգրան Մեծը Հյուսիսային Միջագետքի կառավարումը՝ Մծբին կենտրոնով, հանձնեց իր եղբորը՝ Գուրասին* (P l u t a r c h. Lucullus, XXXII; *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 49*)*: Ըստ Ստրաբոնի՝ Տիգրան Մեծը այնուհետև իր գերիշխանությունը տարածեց Միջագետքի մնացած մասի վրա* ("...καὶ τὴν λοιπὴν Μεσοποταμίαν...". *տե՛ս* S t r a b o, XI, 14, 15)*: Ըստ Իսիդոր Քարակացու՝ Տիգրանը տիրացավ Էկբատանին իր շրջակայքով* (I s i d o r i C h a r a c e n i. Mansiones Parthicae, VI.– K. M ü l l e r. Geographi Graeci Minores, Hildesheim, vol. I, 1965, p. 244-254; *Է. Լ. Դ ա ն ի ե լ յ ա ն. Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները».– ՊԲՀ, 1971, № 4, էջ 173*)*:*

[12] P l u t a r c h. Lucullus, XIV. *Ասորիքի բնակչությունը Սելևկյանների իշխանության թուլացման հետևանքով տառապում էր երկրի անվտանգության ու քաղաքական և տնտեսական կյանքի խաթարումից: Ըստ Յուստինոսի՝ Ասորիքի բնակչությունը, ուժասպառ լինելով ներքին կռիվներից, ապավինելով դրսից սպասվող օգնության գաղափարին, հրավիրեց Տիգրան Մեծին* (Justini Historiarum Philippicarum ex Trogo Pompeio. Histoire Universelle de Justin, traduction nouvelle par M. J. Pierrot, Paris, 1833 , XL, 1)*:*

[13] "...ὁ Τιγράνη[ἦρχε Συρία[τῆ[μετ' Εὐφράτην, ὅσα γένη Σύρων μέχρι Αἰγύπτου. ἦρχε δὲ ὁμοῦ καὶ Κιλικία[..." (*տե՛ս* Appian's Roman History, Book XI, The Syrian Wars, VIII. 48, p. 196–197): *Տիգրանը Անտիոքը (Օրոնտ գետի վրա) դարձրեց իր կենտրոնական քաղաքներից մեկը (մ. թ. ա. 83 թ.), ուր կուսակալ նշանակեց հայ զորավար Բագարատին* (*Տիգրանի կողմից Ասորիքին տիրելու մասին Ստրաբոնի, Յուստինոսի, Ապիանոսի և անտիկ այլ հեղինակների տեղեկությունների քննությունը տե՛ս Հ. Յ. Ա ս տ ո ւ ր ե ա ն. Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք., Վենետիկ, 1912, էջ 34, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 50-51, հմմտ. Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 65*)*: Մ. թ. ա.* 70-*ական թվականների վերջին Պտղոմայիսի պաշարման ժամանակ Տիգրան Մեծի մոտ ժամանեց Հրեաստանի թագուհու դեսպանությունը հարուստ ընծաներով ու խնդրանքով՝ գթասիրտ լինել իրենց թագուհու և ժողովրդի նկատմամբ, քանզի, Հովսեպոս Փլավիոսի վկայությամբ, նրանք խիստ վախեցած էին այն լուրից, թե Տիգրանը մտադրվել էր մտնել իրենց երկիրը: Տիգրանը նրանց հուսադրելով, հետ ուղարկեց* (J o s e p h u s. Jewish Antiquities, with an English transl. by H. St. J. Thackeray, London, 1961, XIII)*:*

զորքերով փակում է պարթևների ճանապարհը դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքային համայնքները տեղափոխում է Մարաստան»[14]*:*

Մեծ Հայքի թագավորության Արտաշատ մայրաքաղաքը հեռու էր արքայից արքա Տիգրան Մեծի հսկայական տերության աշխարհագրական կենտրոնից և, ելնելով նոր մայրաքաղաք հիմնելու անհրաժեշտությունից, Մեծ Հայքի հարավում նա հին աշխարհի քաղաքաշինության բոլոր կանոններով կառուցեց իր անունը կրող Տիգրանակերտը,[15] *որն ուներ արտաքին պարիսպներ և միջնաբերդով պաշտպանված արքունի պալատ, բնակելի թաղամասեր, թատրոնի շենք և այլն: Տիգրանակերտը, քաղաքաշինության իր բարձր մակարդակով, մրցակցում էր Անտիոքի և Ալեքսանդրիայի հետ: Անտիկ հեղինակները մեծ հիացմունքով են խոսել Տիգրանակերտի մասին*[16]*:*

Տիգրան Մեծի քաղաքակրթական գործունեության հաջողությունը պայմանավորված էր քաղաքաշինությամբ, արվեստներին, գիտությանը և արհեստներին ցուցաբերած հովանավորությամբ, ինչպես նաև առևտրական ուղիների պահպանությամբ ու զարգացմամբ: Հայկական լեռնաշխարհի հիմնական մայրուղիները հնագույն ժամանակներից կապված էին արտաքին աշխարհի հետ: Այդ ճանապարհներով էր իրականացվում միջազգային տարանցիկ առևտուրը: Դրանցից էր Չինաստանից և Հնդկաստանից եկող և Իրանով ու Հայաստանով դեպի Եվրոպա և Մերձավոր Արևելք ու Եգիպտոս անցնող «Մետաքսի ճանապարհը»՝ իր ճյուղավորումներով: Մեծ Հայքում այդ ուղիների վրա էին գտնվում Նախիջևանը, Մեծամորը, Էրեբունի-Երևանը, Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Կարինը, Վանը, Մանազկերտը, հետագայում նաև Դվինն ու Անին: Հատկապես կարևոր էր «Մետաքսի ճանապարհի» պաշտպանության խնդիրը, որը կատարեց Տիգրան Մեծն Առաջավոր Ասիայի այն տարածքներում, որոնք ընդգրկվեցին Հայոց տերության կազմում: «Մետաքսի ճանապարհի» մայրուղի-

---

[14] P l u t a r c h. Lucullus, XIV. *Հ. Հակոբյանը, հենվելով սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա, Տիգրան Մեծի տերության աշխարհագրական ընդգրկման մասին գրել է. «Ստեղծված տերությունը կամուրջ էր Հյուսիսային Աֆրիկայի, Առաջավոր, Կենտրոնական ու Հարավային Ասիայի միջև: Նրա ափերը ողողում էին Սև, Միջերկրական, Կասպից, Արալյան ծովերը, Պարսից ծոցն ու Հնդկական օվկիանոսը: Երկու տասնյակից ավելի լեզուներով էին գրում նրա պետական դիվաններում: Տիգրանի կայսրության քաղաքական ազդեցությունը ավելի մեծ շառավիղ էր գծում Հնդկաստանից Հռոմ, Կովկասյան լեռների գագաթներից, Կզլ-Կումի ավազուտներից մինչև Արաբական թերակղզու խորքերը և Եգիպտոս»* (*Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 92*)*:*

[15] *Ստրաբոնի և Տակիտոսի հաղորդումները Տիգրանակերտի՝ Միգդոնիայում կամ Մծբինից 37 հռոմեական մղոն հեռավորության վրա գտնվելու մասին, քննել էր դեռևս Հ. Մանանդյանը, սակայն, հիշատակելով Պլինիոսի, Եվտրոպիոսի, Փավստոսի տեղեկությունները, ինչպես նաև հենվելով Լեհմանի և Բելքի տեսակետների վրա, Տիգրանակերտը նշել էր այժմյան Ֆարկինի տեղում* (*տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 64-65*)*: Ս. Երեմյանն անդրադարձել է Տիգրանակերտ մայրաքաղաքի քաղաքային տարածքին՝ «Տիգրանակերտ գավառին» Մարտիրոպոլիսի, Նփռետի կամ Նփրկերտի առումով* (*տե՛ս Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 86*)*: Հ. Հակոբյանը Տիգրանակերտի տեղադրությունն առաջարկել է մի դեպքում «հին Մայաֆարկինի» տեղում, իսկ մյուս դեպքում՝ Հայաստանի ու Միջագետքի սահմանի վրա* (*տե՛ս Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 31, 102, 104*)*:*

[16] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, էջ 574:*

ների հայկական զինուժի վերահսկողության տակ անցնելու փաստն արդեն իսկ վկայում էր Տիգրան Մեծի օրոք միջազգային ասպարեզում Մեծ Հայքի թագավորության կարևորության մասին[17]: Ինչպես նշել է Հ. Մանանդյանը, հատկապես կարևորվել էր «համաշխարհային գլխավոր ճանապարհի» վրա գտնվող Զևգմայի (Եփրատի գետանցի մոտ) վերահսկողությունը[18]: Տիգրան Մեծի կողմից միջազգային առևտրի անվտանգության ապահովման, վերահսկողության և հովանավորման մասին են վկայում սեփական, ինչպես նաև նրա հովանու տակ այլոց կտրած դրամները Հայոց հսկայածավալ աշխարհակալությունում[19]: Տիգրան Մեծը գլխավոր ճանապարհների վրա բացի Տիգրանակերտ մայրաքաղաքից կառուցեց իր անունը կրող ևս մի քանի քաղաքներ՝ Արցախում և Ուտիքում[20], Գողթն գավառում (Տիգրանավան), ինչպես նաև Մարաստանում (Տիգրանա) և Ամանոսում (Տիգրանուկոմե)[21]:

Տիգրան Մեծը կարողացել էր կայուն վիճակ ապահովել իր հսկայական տերության սահմաններում՝ շնորհիվ պետական կենտրոնաձիգ քաղաքականության և քաղաքական ճկունության: Նա իրեն հնազանդություն հայտնող թագավորների իշխանությունը չէր վերացնում: Ինչպես հաղորդում է Պլուտարքոսը, շատ թագավորներ էին ծառայում Տիգրանին[22]:

Տիգրան Մեծի պետական իմաստությամբ գործելու արգասիքն էր Պոմպեոսի հետ պայմանագիր կնքելուց հետո բուն հայրենի տարածքի՝ Արմենիա-Հայաստանի ամբողջականության պահպանումը, ինչպես կարելի է եզրակացնել Ա-

---

[17] Я. А. М а н а н д я н. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.), изд. 2-е, Ереван, 1954, с. 70-71; *Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, էջ 572: «Մետաքսի ճանապարհի» Հնդկաստանից և Միջին Ասիայից մինչև Միջերկրականի ափերը՝ Կիլիկիայի ու մերձավորարևելյան այլ նավահանգիստներ և Եգիպտոս հասնող հատվածի անվտանգությունն ապահովում էր Տիգրան Մեծը: «Մետաքսի ճանապարհի» ապահովությանը խոչընդոտող դժվարություններ պետք է ծագած լինեին դրա՝ Փոքր Ասիայով դեպի արևմուտք շարունակվող հատվածում, որը հայտնվել էր Պոնտոսի թագավորության և Հռոմեական պետության հակամարտության, իսկ ապա՝ նաև վերջինիս նվաճումների ճանապարհին:*

[18] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 49, 51:*

[19] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Հայաստանի դրամական գանձերը, Երևան, 1973, էջ 27-30, 54,* H. S e y r i g. Sur les ères de quelques villes de Syrie, Syria.– «Revue d'art oriental et d'archéologie», XXVII, 1950 ; *Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 65,* Y. T. N e r c e s s i a n. Armenian Coins and their Values. Los Angeles, 1995, p. *57-74; Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 101:*

[20] *Հ. Հակոբյանը նշել է, որ Տիգրանը «Տիգրանակերտներ հիմնեց մեկն Արցախում, երկուսն էլ Ուտիքում» (Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 104): Ըստ Սեբեոսի՝ մեկը Արցախում էր, իսկ մյուսը՝ Ուտիքում: Բյուզանդական Հերակլ կայսեր արևելյան արշավանքի կապակցությամբ, հիշատակելով նրա դեմ գործած պարսից զորավարների տեղաշարժերը, պատմիչը նշել է. «Եւ նա (Շահր Վարազ) փութով հասանէ յԱյրարատ, և անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, և բանակի ի միւս Տիգրանակերտի յանդիման նորա: Եւ Շահէնն ԼՌ-աւ հասեալ բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի» (Պատմութիւն Սեբէոսի, աշխատ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 125):*

[21] *Պտղոմեոսի, Պլուտարքոսի և Պլինիոսի հաղորդումների քննությունը տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, էջ 574:*

[22] P l u t a r c h. Lucullus, XXI. *Այդ թագավորների պարտականությունն էր, ըստ Հ. Մանանդյանի, Տիգրանին որոշ հարկ տալը, իսկ պատերազմի ժամանակ՝ զորք տրամադրելը (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 56):*

պիանոսի հաղորդումներից[23]*: Դրա վառ վկայությունն է Պլուտարքոսի այն դառը խոստովանությունը, որ մինչ այդ՝ Լուկուլլոսի արշավանքներից հետո էլ Ասիայում հռոմեական տերության սահմանը դարձել էր ոչ թե աշխարհի ծայրը կամ Վրկանից (Կասպից) ծովը, այլ մնացել էր Եփրատը,*[24] *ինչպես և Սուլլայի ժամանակ էր*[25]*: Սա, փաստորեն, Հռոմեական տերության փառքի ջատագով Պլուտարքոսի խոստովանությունն էր Տիգրան Մեծի բանակից հռոմեացիների*[26] *և պարթևների կրած պարտությունների մասին:*

Այսպիսով, Տիգրան Մեծի ողջ գործունեությունը նրան բնորոշում է որպես մեծ քաղաքակրթող, Հայոց աշխարհը հզորացնող և շենացնող՝ ազգային ու համաշխարհային պատմության մեջ խորը հետք թողած թագավոր:

Ռ. Մանասերյանը, գնահատելով Տիգրան Մեծի պետական գործունեությունը, եզրակացրել է. «Հայ ժողովրդի պատմության մեջ Տիգրանը այն միակ գործիչն էր, որ վճռականապես և հետևողականորեն պայքարում էր ընդդեմ Առաջավոր Ասիայում, Եփրատի և Տիգրիսի տարածքում մեծ տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի տիրապետության հաստատման... Հռոմի և Պարթևական Իրանի դեմ նրա շուրջ երեսնամյա հակամարտությունը նշանակում էր Հայաստանի պատմության մեջ իր արտաքին ազատությունը պահպանելու, իր ձեռքում սեփական ճակատագիրը պահելու հերոսական փորձ: Դա պայքար էր անկախ գոյության պայմաններ ստեղծելու համար»[27]*:*

Տիգրան Մեծը ոչ թե փորձ էր կատարում պատմության մեջ, այլ ինքը՝ Հայոց պետության շենացման և հզորացման շարունակողն էր: Նրա գործունեությունը պետք է դիտել մինչ իր ժամանակաշրջանը՝ հայկական պետականության պատմության անցած հազարամյակների ուղու չափանիշներով[28]*: Մովսես Խորենացին, Հայկազունի նախնիների փառքով ոգեշնչված, գրել է. «Ինձ այսքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկիչն և զիս գնել, և առ*

---

[23] Appian's Roman History, Book XII, The Mithridatic Wars, XII, 114, p. 462-463.

[24] P l u t a r c h. Lucullus, XXXVI, 5.

[25] *Սուլլան կանգնել էր Եփրատի ափին (մ. թ. ա. 92 թ.), ուր նրա և պարթևական դեսպանի միջև տեղի էին ունեցել բանակցություններ (*P l u t a r c h. Sulla, V. 4*):*

[26] *Լուկուլլոսի գլխավորած հռոմեական զորքը պարտություն էր կրել Արածանիի ճակատամարտում* (P l u t a r c h. Lucullus, XXXI-XXXII, Dio Cass., XXXVI, 4-6; *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ* 154): *Կիկերոնը (մ. թ. ա. 106-43 թթ.) և հռոմեական այլ հեղինակներ* (C i c e r o. The Speeches. Pro Sestio and in Vatinium, with an English transl., London, 1958, XXVII, 58, p. 113; Eutropii Breviarium Historiae Romanae, Mosquae, 1845, Liber VI. 8. (7), p. 48 *և այլն*) *Տիգրան Մեծին համարում էին հզոր ու վճռական, փառքով գահակալող տիրակալ, որը Հռոմի վտանգավոր մրցակիցն էր Արևելքում:*

[27] *Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 237:*

[28] *Դրա վկայությունն է Հայկական լեռնաշխարհի՝ հայ ազգի, դարերի խորքից եկող ստեղծագործական արարման վկայություն հանդիսացող Զորաց քարերի, Շենգավիթի, Մեծամորի, Թռեղքի, Արկանի (Արդանա), Բալահովիտ-Խարբերդի, Ագարակի և Օշականի Ցլու գլուխ բլրի, Կարնո Սոսիի, Քարաշամբի, Լոռի-Բերդի, Վանի, Դովրիի, Էրեբունիի, Արմավիրի, Երվանդաշատի ու այլ հուշարձանների մշակութային հագեցվածությունը:*

նոքօք յաշխարհի զմուտն իմ լինել, և նոցա տէրությամբն խրախճանալ, և յարդեացս ապրել վտանգիցս»[29]*:*

Հնագույն ժամանակներից հայոց պատմության մեջ գրանցված պետականության ու մշակույթի բարձր որակները պայմանավորեցին Տիգրան Մեծի հայոց քաղաքական և պետական ասպարեզ բարձրանալը: Հ. Մանանդյանը նշել է, որ Հայաստանի «...տնտեսական ու քաղաքական խաղաղ զարգացումը նախորդ դարերում՝ մեծապես նպաստել էր, անշուշտ, նրա աշխարհակալական ընդարձակմանը Տիգրանի ժամանակ»[30]*: Տիգրան Մեծի դարաշրջանի և դրան նախորդած ու հաջորդած ժամանակների առումով Արտաշատի հնագիտական պեղումներից ստացված նյութական հարուստ մշակույթի վերլուծության հիման վրա Հ. Հակոբյանը եզրակացրել է, որ այդ նյութերը վեր են հանում մի իրողություն, որ «Հայաստանը քաղաքակիրթ աշխարհի կարևոր օջախներից էր և ուներ Տիգրանի գործունեությամբ պսակված փայլուն մշակույթ... Հայկական աշխարհակալությունը հին Հայաստանի բնականոն զարգացման հետևանք էր...»*[31]*: Այնինչ, Ռ. Մանասերյանը, քննարկելով մ. թ. ա. 66 թվականին հայկական պետության համար ստեղծված իրավիճակը, գրում է. «Երիտասարդ և դեռ վերջնականապես չհասունացած, սեփական ազգային մշակույթը դեռ չստեղծած (դեռ նոր էին ձևավորվում դրա տարրերը), իր ինքնությունը դեռ լրիվ չիմաստավորած ժողովրդի համար պետությունը՝ քաղաքական անկախությունը (այսինքն օտարազգի՝ տվյալ դեպքում հռոմեական վարչության տիրապետության բացակայումը) գոյության, հարատևման միակ նախապայմանն էր ու երաշխիքը»*[32]*: Հետազոտողը, անվերապահ ընդունելով Ռ. Գրուսեի դրույթը «հետմահու*

---

[29] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 66-67:*

[30] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 57:*

[31] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 228, 230:*

[32] *Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 239: Անդրադառնալով Զենոն-Արտաշեսի թագադրմանը (մ. թ. 18 թ.)՝ հեղինակը նկարագրել է հռոմեական մանրաքանդակ արվեստի՝ «Ֆրանսիայի մեծ կամեայի» նմուշի բազմաֆիգուր տեսարանը և ենթադրել, որ դրանցից՝ «անտրտունջ հնազանդությամբ, կայսերական գահավորակի ստորոտում, գլուխը կախ, դեպի ծնկները պարզած ձեռքերով... գետնին նստած հպատակության արտահայտությամբ ֆիգուրը ներկայացնում է Հայաստանը... և նրան գերիշխելու ստրատեգիական կարևորությունը քաջ գիտակցվում էր» (Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 87-88): Նմանապես, առանց որևէ հիմքի, Ռ. Մանասերյանը գրել է. «Հայերին տալ թագավոր» ձևակերպումը նույնպես ճշգրիտ զուգահեռներ ունի աստծո առանձնաշնորհը վկայող ձևակերպումների հետ: Եհովան «ձեզ (ժողովրդին) թագավոր տվեց» (Թագ. Ա 7,8,9): Այդ ձևակերպումն ինքնին ենթադրում է հայերի անթագավոր, քաղաքականապես անկարգ վիճակը... Կայսրը իր գործողությամբ փոխարինում էր հայկական պանթեոնի գերագույն աստծուն» (նույն տեղում, էջ 99-100): Պետք է հիշել, որ դրանից նույնիսկ երեք դար առաջ Հին կտակարանի հունարեն՝ Յոթանասնից թարգմանությունում* (The Septuagint Version of the Old Testament, with an English translation, Michigan, 1970)*, ինչպես նաև հետագայում՝ V դ. հայերեն թարգմանությունում (Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Կոստանդնուպոլիս, 1895) հրեական պանթեոնի ամպրոպի և կայծակի աստվածության՝ Յահվեի անունը (տե՛ս* H. B a u e r, P. L e a n d e r. Historische Grammatik der hebraischen Sprache, I, Halle, 1922, S. 24.) *ընդհանրապես չի հիշատակված, ինչպես և հռոմեական պանթեոնը ոչ մի կապ չուներ նրա պաշտամունքի հետ: Ավելին, մ. թ. I դարի երկրորդ կեսին՝ Հրեական պատերազմի ժամանակ Երուսաղեմի՝ հռոմեական զորքերի կողմից պաշարման և գրավման ընթացքում, տաճարը ավերվեց ի թիվս այլ*

աքեմենիզմի» մասին[33]*, գրել է. «Տիգրանի արքունիքը ի հայտ էր բերում Աքեմենյան և Սելևկյան վարքաձևերի ձուլումը… արքունիքում իշխում էր «հետմահու աքեմենիզմ»՝ Աքեմենյան Իրանից ժառանգած բարքեր: Աքեմենյան էին Տիգրանի և առհասարակ Արտաշեսյանների արքայանշանները (իշխանության խորհրդանիշները)՝ թագի վրա փայլատակող ութ շողանոց արեգակը…»*[34]*: Հակառակ նման մոտեցման, Հ. Հակոբյանը գրում է. «Պատմաբան Ռ. Գրուսեն հայտարարում է, որ Արտաշեսյան արքունիքում տիրապետում էր «հետմահու աքեմենականությունը», որ շատ պատկերավոր է, բայց խիստ վիճելի»: Կարծիք հայտնելով, որ «...հայկական տիարան սերտ առնչություններ ունի նաև… իրանական աշխարհի հետ», Հ. Հակոբյանը նշել է, որ «...հայկական տիարայից աքեմենյանները տարբերվում են…»: Միևնույն ժամանակ հեղինակը, խոսելով հայկական տիարայի կամ խույրի՝ անտիկ դարաշրջանի դրամների վրա պատկերված թագի մասին, «որը կրում էին Տիգրան Մեծն ու հաջորդ մի քանի Արտաշեսյան արքաներն ու ազգակից կոմմագենյան ճյուղի Երվանդունի թագավորները», ինչպես նաև մի շարք համեմատություններ կատարելով, նշել է, որ «տիարան ունի հին արևելյան արմատներ»*[35]*:*

Այս տեսակետից կարևոր է Ս. Դևեջյանի դիտարկումը Լոռի բերդի բրոնզեդարյան բնակավայրից պեղված նյութերի մասին. «Վերջին տարիների պեղված №-3 տան կենտրոնում, մոտ 30 սմ հզորության մշակութային խառը շերտի մեջ, միջին բրոնզեդարյան շատ բնորոշ խեցեղենի շարքում, հայտնաբերվեց նաև սև փայլեցրած մակերեսով ու վարդագույն աստառով խեցու փոքրիկ բեկոր: Սրա վրա փորագրված է մարդկային գլուխ՝ կիսադեմով, որը կրում է վեց սրածայր ատամներ ունեցող ցածր թագ… Ակնհայտ է, որ մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող սև փայլեցրած (հավանաբար՝ ծիսական) կավամանի վրա փորագրվել է մեծազարմ անձնավորության պատկեր: Նա կարող էր լինել թագավոր, թագակիր իշխան, աստված կամ առնվազն քրմապետ: Վերջինիս օգտին է վկայում, մանավանդ, թագի վրայի շուշանը կամ լոտոսի ծաղիկը, որը բնորոշ էր քրմական դասին»[36]*: Հետազոտողն առավել կարևոր է համարել «Լոռի բերդի պատկերի գլխի հանդերձանքը՝ թագը, սրածայր ատամներով և թագա-*

շինությունների (Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 189: Հին հունական աղբյուրներ, Ա, Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս, Դ ի ո ն Կ ա ս ի ո ս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծան. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 15):

[33] *Տե՛ս* R. G r o u s s e t. Histoire de l'Arménie dès origines à 1071. Paris, 1947, p. 100.

[34] *Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, էջ 103:*

[35] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 215-216:*

[36] *Ս. Դ և ե ջ յ ա ն. Թագակիր իշխանավորի պատկերը Լոռի բերդի բրոնզեդարյան բնակավայրից.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 8, էջ 75-79: Խսթուշաշի Թեշուբ աստծո կամ թագավորի նշանավոր բարձրաքանդակի (մ. թ. ա.* XIV *դար) սաղավարտի բաղկացուցիչ մասը կազմող այտակալների ու վզկալի կապակցությամբ Ս. Դևեջյանը բերել է Գ. Տիրացյանի կարծիքը, ըստ որի՝ դրանք ավանդաբար փոխանցվել են աքեմենյան փոքրասիական սատրապների գլխարկներին և հայկական Արտաշեսյան հարստության թագավորների թագին և, որ, ի տարբերություն աքեմենյանների, հայ թագավորները թագի վրայից կապում էին նաև ժապավեն կամ դիադեմա՝ ապարոշ* (Г. А. Т и р а ц я н. Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации.–"Вестник древней истории", 1982, № 2, с. 90-93):

վորական ժապավենով… Առաջավոր Ասիայում ատամնավոր թագերը գործածվել են տակավին մ. թ. ա. III հազարամյակից, իսկ Հայաստանում այն առաջին անգամ երևում է Լոռի բերդի բեկորի վրա»[37]*: Ս. Դևեջյանն անդրադարձել է Վ. Հացունու կարծիքին. «Տիգրան Մեծի թագը կամ, ինչպես ընդունված է ասել, «հայկական թագը» սերվել է ոչ թե ժամանակակից օտար խույրերից, այլ Միհր աստծո թագից, որի պաշտամունքը տարածված էր հայոց մեջ, մանավանդ, որ հայ թագավորները միաժամանակ նաև քրմապետեր էին»*[38]*: Ս. Դևեջյանը, եզրակացնում է, որ Լոռի բերդի իշխանավորի կամ թագավորի պատկերը «հիմք է տալիս խոսելու մ. թ. ա.* II *հազարամյակի առաջին կեսին հյուսիսային Հայաստանում գոյություն ունեցող քաղաքական միավորումների մասին: Նրա թագը ոչ միայն աղերսվում է հինարևելյան իշխանավորների թագերին և խույրերին, այլև սերտորեն կապվում է մեզ քաջ ծանոթ հայկական թագին, մատնանշելով նրա ծագման բուն ակունքները»*[39]*: Հնագետ Ս. Դևեջյանի կարծիքը հիմնարար նշանակություն ունի հայոց արքայական խորհրդանիշների ծագումն ուսումնասիրելիս՝ նկատի ունենալով նախորդ հազարամյակներից հայոց հոգևոր մշակույթի ու պետականության զարգացումները:*

Տիգրան Մեծի գործունեությունը գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ Հայաստանը համաշխարհային քաղաքակրթության օջախ է[40]*, և հայկական պետականությունը ավելի քան երեք հազարամյա պատմական ուղի էր անցել մինչև Տիգրան Մեծի ժամանակները*[41]*: Հայոց պատմության մեջ Տիգրան Մեծի թողած ժառանգությունը հոգելցված է նախնիների փառքով և հայրենաճանաչությամբ՝ դրա նկատմամբ եղած մեծագույն պատասխանատվությամբ:*

СТРАТЕГИЯ ЦИВИЛИЗАТОРСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ТИГРАНА II ВЕЛИКОГО

ЭДУАРД ДАНИЕЛЯН

Р е з ю м е

Внутренняя и внешняя политика Тиграна II Великого (95–55 гг. до н. э.) была подчинена важнейшей задаче – укреплению безопасности и защиты независимости Армянского государства. Вся его государственная деятельность исходила из определенной системы–доктрины военно-политических принципов, в основе которой лежала идея обеспечения оборонной и экономической мощи царства Великой Армении. С этой целью он использовал военный и дипломатический арсенал

[37] *Նույն տեղում:*

[38] *Հ. Վ ա ր դ ա ն վ. Հ ա ց ո ւ ն ի. Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1922, էջ 69:*

[39] *Ս. Դ և ե ջ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 80-81:*

[40] Calmet (Rev. Père Dom Augustin) *in Dictionnaire de la Bible*-Paris: Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846, p. 162.– René Léonian «Les Arméniens de France sont-ils assimilés ?», Issy-les-Moulineaux, 1986, p. 21; D a v i d M. L a n g. Armenia Cradle of Civilization. London, 1970, p. 9.

[41] E. L. D a n i e l i a n. The Historical Background to Armenian State Political Doctrine.– Armenian Perspectives. 10th Anniversary Conference of the Association Internationale des Etudes Arméniennes, Curzon, 1997, p. 282.

против экспансионистской политики Римского государства и Парфянского царства. Внутренняя военно-политическая направленность политики Тиграна II Великого, по своей сути, была центростремительной, активно-оборонительной, а внешняя – наступательной. Тем самым стало возможным обеспечить территориальную целостность царства Великой Армении при последовавших геополитических изменениях. Армения является колыбелью цивилизации и до эпохи Тиграна II Великого армянская государственность прошла более чем трехтысячелетний путь исторического развития. Необходимо констатировать, что Тигран II Великий продолжил цивилизаторские традиции на более широком международном поприще – развитие градостроительства, торговли (защита Шелкового пути) и покровительство науки и искусства. Наследие Тиграна Великого в истории Армении овеяно славой предков и величайшей ответственностью за нее.

THE STRATEGY OF THE CIVILIZATIONAL ACTIVITY OF TIGRAN II THE GREAT

EDWARD DANIELYAN

S u m m a r y

The internal and external policy of Tigran II the Great (95–55 B.C.) was dictated by the necessity of the reinforcement of the security and the defense of the Armenian state's independence. His state activity completely emerged from the certain system–doctrine of the military-political principles based on the idea of the safeguarding of the defense and economic might of the Kingdom of Great Armenia. With that aim he used the military and diplomatic arsenal against the expansion of the Roman state and the Parthian Kingdom. The internal military-political directivity of the policy of Tigran II the Great, essentially, was centripetal, active-defensive and external – offensive. Thus, during succeeding geopolitical changes it was possible to secure the territorial integrity of the Kingdom of Great Armenia. Armenia is a cradle of civilization and until the epoch of Tigran the Great the Armenian statehood had already passed more than three millennia of the historic development. It is necessary to ascertain that Tigran the Great continued civilizational traditions in wider international field – the development of town-planning and trade (protection of the Silk Road), patronizing science and arts. The heritage of Tigran the Great in the Armenian history is hallowed by the glory of the ancestors and the great responsibility for it.